ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

01.07.2019թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 95-99 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հանձնարարականը՝

ՀՀ Լոռու մարզպետարանի ՀԳՄՏՍ գործունեության համակարգման բաժնի պետ Վարդան Հովհաննիսյանի, հաշվապահական հաշվառման բաժնի պետ Արտավազդ Բեջանյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանի, ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջատար մասնագետ Մուշեղ Գրիգորյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Էդգար Հախվերդյանի, քաղաքաշինության վարչության առաջատար մասնագետ Արման Մխիթարյանի, համայնքների գլխավոր հատակագծերի և գոտիավորման սխեմաների նախագծերի կազմման աշխատանքների համակարգող Գագիկ Հախինյանի և կրթության բաժնի գլխավոր մասնագետ Անահիտ Բարոյանի կողմից իրականացվեց իրավական և մասնագիտական հսկողություն ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքում՝ ՏԻՄ-երի լիազորությունների, հողօգտագործման, կապի և առողջապահության, քաղաքաշինության և կրթության ոլորտներում, ինչպես նաև համայնքային ենթակայության 4 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

1. Իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արձանագրությունը կից հավելվածով ներկայացված՝ հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ /համայնքի ղեկավարի առարկությունները իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների և իրավական և մասնագիտական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/

_____

_____

4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Լոռու մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ստեփանավան համայնքի ղեկավարին:

Վարդան Հովհաննիսյան _____

Արտավազդ Բեջանյան _____

Դավիթ Թամարյան _____

Մուշեղ Գրիգորյան _____

Էդգար Հախվերդյան _____

Գագիկ Հախինյան _____

Արման Մխիթարյան _____

Անահիտ Բարոյան _____

Համայնքի ղեկավար՝
Միքայել Ղարաքեշիշյան _____